

ԳԻԱԱ ՌԱՍԽՅՉԻՉ — ԲՈՋԱՅ ԲԱՆԱՏԵՂԵՐԻԿԻ

ՎԼԻՍԼ. ԱՑԿԻ-ՀԵ ԳՐԻԳՈՐ ՎԱՆՅԵԱՆ

Aus dem inneren Leben der Zigeuner.
Ethnologische Mittheilungnn, von Dr.
Heinrich Wlislocki.

Գիտնական Վլիսլոցկու այս զիրքը՝ բոշաների դիցաբանութեան, հաւատալիքների և նախապաշարմունքների մի հարուստ հաւաքածու է, որ մասնագիտական նշանակութիւն ունենալով, չենք ուզում քաղւածօրէն այստեղ դնել, մինչ նոյն աշխատութեան վերոյիշեալ բանաստեղծունուն վերաբերեալ մասը, բերում ենք մանրամասնօրէն:

Այդ բոշաց կնոջ տարօրինակ կեանքը մեծ լոյս է սփռում եւ բոպական բոշաների իրաւաբանական յարաբերութիւնների վերայ և, ինչպէս կը տեսնէ ընթերցողը, մեզ հայերիս համար մի առանձին հետաքրքրութիւն ունի, քանի որ այդ բոշաց-Սահմօն իւր սկզբնական կրթութիւնը ստացել է հայի ձեռքով և հայոց ուսումնաբանում և թերեւս առանց այդ կրթութեան նա կորչէր ինչպէս մի տգէտ և անյայտ անդամ թափառաշրջիկ բոշաների:

Այս տաղանդաւոր և անրադդ կնոջ կեանքը լի է այնպիսի եղերական դէպքերով, որոնք կարող էին վիպասանին առատ նիւթ մատակարարել:

Դիսա Ռանիցիչը եթէ ուրիշ ազգութեան պատկանէր, եթէ նա ուրիշ պայմանների մէջ ապրէր, նորա գեղեցկութիւնն ու դաստիարակութիւնը իւր կեանքի անէծքը չէին դառնայ, և թերեւս նորա տաղանդը այդպիսի մեծ համբաւ չը հայթացթէր: Նորա թռ-

զած 250 բանաստեղծութիւնների մէջ արտայայտւում է նորա ամբողջ կեանքը իւր բոլոր տանջանքներով, անզօր կռւով, դառն հիասթափումով և փշրւած յոխերով:

Ունդարիալի յեղափօխութեան ժամանակ Գինա Ռանիչէր իւր ցեղի հետ Խորւատիալից փախչում էր Սերբիա Մոլորելով և յետ մնալով իւր ազգականներից, որոնք գողութեան համար հալածւում էին թուրք զինւորներից, նա տասներեք տարեկան ժամանակ ընկաւ հայ վաճառական Օւակիմ Դալենեսի (?) տունը, որ այն ժամանակ ապրում էր Բէլզրագում, բայց շուտով Գինայի հետ այնտեղից վերաբնակեց հայրենի Կ. Պոլիս քաղաքը:

Խնչպէս երեսում է, Դալենեսը սիրեց բոշայ աղջկան: Այդ աղջիկը Կ. Պոլսում սկսեց յաճախել հայոց ուսումնարանը և, բացի դորանից, նորա հայ խնամակալը նորա համար գերմաններէնի ուսուցիչ հրաւիրեց, որը երեք տարի պարագեց նորա հետ:

Գինայի դաստիարակը ամուրի էր և ապրում էր իւր ամուրի եղբօր Գարբիէլի հետ, որը նոյնպէս հասակաւոր էր: Մի անգամ Գարբիէլը Գինային առաջարկեց, որ իւր կինն ու տան ընկերուհին դառնայ: Գինան համաձայնեց, գերմաններէնի ուսուցչին արձակեցին, և Գինան դարձաւ տանտիրուհի: «Մարդս», ինչպէս նա անւանում էր Գարբիէլին, մարմնացած բարութիւն էր. և նա այս ծերուկի մօտ իրան բոլորովին բաղդաւոր էր համարում:

Այս ժամանակ ահա նա սկսեց բանաստեղծութիւններ զրել հայերէն, թուրքերէն և բոշայերէն:

Գինայի ամուսնական բաղդաւորութիւնը խանգարւեց մի երիտասարդ ալբանացու պատճառով, որը սիրահարեց գեղեցիկ գնչուհու վերայ, որին իւր մարդը զուգում և զարդարում էր արևելեան ճոխութեամբ:

Ալբանացին, որի անունը Գրիգոր Կորոշան էր, մի անգամ մոտաւ Դալենես եղբայրների տունը, և Գինայի հետևեալ խօսակցութիւնն ունեցաւ. «Քո մարդը քեզ պապ կարող է լինել, եթէ դու ապրել ես ուզում, այժմեանից ինձ հետևեր, որովհեռու սուլթան հրամայել է ալսօր կոտորել բոլոր հայերին»: Եւ Գինան հետեւեց «Կիսկետարին»—ինչպէս ինքն էր անւանում այդ ալբանացուն, —մերժելով այն ճոխութիւնը, որ նա վայելում էր Կ. Պոլսում,

և իւր կեանքը կապելով մի անծանօթ մարդու հետ, որի ով կամ ինչ լինելը չէր ճանաչում: Կ. Պոլսից փախչելու երկրորդ օրը ալբանացին նորան յաջոտնեց, որ եթէ վերադառնայ իւր մարդու տունը, իսկոյն նորան կը ձերբակալեն և կը տան իշխանութեան, որովհետեւ երկու Դալանես եղբայրներին էլ գտել են սպանւած այն սենեակում, որտեղ իրանց գանձերն էին պահում և այդ սպանութեան կասկածը ընկնում է Գինացի վերաբ:

Թրաւի 1851 թ. Պոլսում սպանւել և կօղոպտել էր հայ վաճառական Գաբրիէլ Դալենեսը, բայց թէ ով էր սպանողը, քննութեամբ չի յայտնած:

Այս հանելուկի վերայ մի քիչ լոյս են սփռում, այդ ժամանակամիջոցի վերաբերեալ, Գինացի մի քանի բանաստեղծութիւնները. բերում ենք նոցանից մինի թարգմանութիւնը, որ կարծել է տալիս, թէ Գինան ճանաչում էր իւր մարդու սպանողին¹⁾: «Թիթեաների պէս, որ սաւառնում են Բալկանի վերայ, սաւառնում են իմ ցանկութիւնները և ես երբէք չեմ կարող յազմցնել նորանց: Երեխացի պէս իմ ուրախութիւններս վաղանցիկ են և դրա չեն, որ ժպիտ են առաջացնում: Ոչ, իմ ժպիտս առաջանում է վշտից և կարօտից:

«Թիթեաների պէս, որ սաւառնում են Բալկանի վերայ, սաւառնում են մաքերս և թափանցում են ամուսնուս արիւնաշաղախ կուրծքը, և այնտեղից, ինչպէս որ որդներ, սողում են իմ սրտի մէջ, և ոչ ոք աշխարհիս երեսին չի կարող նոցա հալածել այնտեղից»:

Սիրում էր թէ ոչ բանաստեղծուհին իւր առաջին մարդուն, բայց շատ բանաստեղծութիւններից երևում է, որ նորա մասին ունեցած յիշողութիւնները նա իւր հետ Ալբանիա էլ տարաւ, ուր

1) Շատ հաւանական է, որ այդ երգի բնագիրը հակերէն լինի. քանի որ, ինչպէս լաբոնում է գիտնական Վլիսլոցկին, նա հակերէն էլ գրելիս է եղել բանաստեղծութիւններ: Շատ հետաքրքրական է, թէ մնացնէ են արգեօք ալդ տաղանդաւոր կնոջ հակերէն բանաստեղծութիւնները: Պոլսեցի հակ գրագէտների վերաէ բարողական պարուք կաէ հաւաքել աղ կնոջ բանաստեղծութիւնները, որ անտարակովս ընտիր բաներ պիտի լինեն, և լուսաբանել նորա կեանքի ան շրջանը որ անց է կացրել հալոց ուսումնարանում և ցըանում:

նա գնացել էր «Կիպետարի» հետ և որտեղ կատարւում էին նորա ամենաշնչին ցանկութիւնները «Կիպետարի» ձեռքով։

Աղբիանոպղիս դալուց յետոյ ալբանացին վարձւեց մի վաճառականական ընկերութիւնից, որի անդամներին նա ձիով պիտի ուղեցէր Սերբիա, Բոսնիա և ունգարական սահմանը։ Գինան միշտ ուղեկցում էր նորան այս դժւարին և վտանգաւոր ճանապարհորդութիւններին, թէև դիտէր, որ իւր սիրեկանը ալբանացի աւազալին խմբի հետ սերտ յարաբերութիւն ունի, որ երեւում է հետեւալ՝ հաւանականօրէն դառն մտածութեան բուղէներում զրած բանաստեղծութիւնից։

«Երբէք քեզ չեմ պատկանել, ինչպէս որ արել պատկանում է երկնակամարին. քեզ չեմ սիրել և չեմ սիրում, թէև քեզ արթեցրել եմ երջանկութիւնով։

«Ասմ, տեսթի ես դու դանակը, արիւնաշաղաղ դանակը։ Ի՞նչպէս տեսած չը լինիս, քանի որ դու աւազակների հետ ես ընկերանում։

«Սէրը չէ որ կրծում է քո սիրուը և լցնում է նորան տանջանքով ու գողով. նորան կրծում է ամուսնուս արիւնը, որ իւր արել սեւացրեց երկուսիս համար։

«Առաջ դու խարեբայ էիր, իսկ այժմ մարդասպան դարձար։ Դանակը ինձ այն մարդկանց ստրուկ դարձրեց, որոնց ձեռները պղծւած են արիւնով։

Դառն հեգնութիւն են շնչում բանաստեղծունու մի քանի ոտանաւորները, որոնցից կարելի է եզրակացնել, թէ «մարդը» սպանւել է իւր գիտութեամբ և ալբանացին վախել է նորա հետ կողոպտելով մարդու գանձերը։ Ճշմարիտ է, որ «Կիպետարի» ձեռքերը մաքուր չէին։ Ինքը Գինան պատմել է Վլիսլոցկուն, որ ալբանացին աւազակների ձեռն էր տալիս այն հարուստ վաճառականներին, որոնց պահպանութիւնը իրան էր յանձնւած։

Նոցա սպանում կամ կապուած գցում էին ճամբու վերայ, իսկ նոցա փողերն և ապրանքը թագցնում էին ալբանական լեռներում։ Այդպիսի քաջագործութիւններից յետոյ «Կիպետարը» իւր սիրուհուն պարզեատրում էր շուայլ լնծաներով և ինչպէս երեւում է, նորան չափազանց սիրում էր։

Այս արկածներով լի կեանքը Գինային, որպէս օտարոտի և բոշայ կնոջ, դուր էր գալիս, բայց մշտական վտանգն ու կռիւները դուր չէին զալիս նորա խաղաղասէր բարոյական բնաւթրութեանը և նա շատ անգամ խնդրում էր իւր սիրեկանին Պոլիս զառնալը Ալբանացին, ի հարկէ, նորա ցանկութիւնը չը կատարելու հիմնական պատճառ ունէր:

Երկու տարուց յետոյ Գինան մոտադրւեց ծածուկ փախչել նորանից, բայց ալբանացին իմացաւ նորա մտադրութիւնը և ծանր վիրաւորեց Գինայի այտը: Այդ վէրքի սպին նորա վերայ մնաց մինչև մահը:

Այս դէպքից յետոյ նա հաշուեց այն ժամանակ, երբ ալբանացին խոստացաւ Սերբիա գնալ և բերել իւր սիրուհու ծնողներին: Գնալիս ալբանացին իւր սիրուհուն երեք ամսով ծախեց մի ունգարացու, որ ապրում էր Աղրիանապոլսում: Այս վարմունքը ըստ երեսութին Գինային բոլորովին չը վշտացրեց: Այն ժամանակներում ալբանացիք սովորութիւն ունեին առժամանակ ծախել իրանց կանանց ստրկուհիներին:

Բայց ևկիպետարը Գինային փող էր տալիս նորա ունգարացու մօտ մնացած ժամանակն էլ:

Իւր ժամանակաւոր մարդու տանը անհաստատակամ բոշան սիրահարւեց մի ևսպիտակ մարդու վերայ, որի անունը նա երբէք մէկին չ'ասաց: Նորան նսիրւած երգերում նա նորան անւանում է իւր միակ իսկական սէրը, որ սակայն չէր խանգարում վերջերում կրկին անգամ յայտնելու իւր բորբքուն սէրը ևկիպետարին:

Կորստից պահւած նորա ոտանաւորները չորեքտողեան են, որոնց մէջ նա երգում է սէրը. բայց երգում է ոչ ընտիր և գովասանական մոքերով. սիրահարներին նա անւանում է Վյիմարներ, որոնք ամեն մի խողի երամակում սիրուհու պատկերն են տեսնում: Սորանից յետոյ Գինան երկար ժամանակ բանաստեղծութիւն չէր գրում, որովհետեւ վրայ հասան մռայլ, դառն հիասթափումով լի օրեր:

Մի խայտառակ դէպք ունգարացուն ստիպէց, որի մօտ կենում էր Գինան, գուրս անելու նորան իւր տանից:

Գինայի պատմելով դորա պատճառը այն հանգամանքն էր, որ

մի ւպարոնց, որ ամեն օր յաճախում էր ունգարացու տունը, (պէտք է կարծել, որ դա այն «սպիտակ մարզն է», որին նւիրած են այն բորբոքուն բանաստեղծութիւնները) գողացաւ Գինայի փողերն ու շորերը: Մնալով աղքատ և անապաստան, Գինան մի քանի շաբաթ թափառում էր Աղրիանպոլսի փողոցներում և վերջապէս վճռեց որոնել իւր «Կիպետարին»:

Բարեբազրաբար նորան գտաւ Աղրիանոսպոլսից ոչ հեռու, որ վերադառնում էր նորա բոլոր ազգականների հետ, որոնց յետեկից նա Գինայի խնդրով գնացել էր Սերբիա:

Հանդիպումը ըստ երեսյթին այնքան էլ սիրալիր չէր. Գինայի ազգականները իրանց անյագ բոշայութիւնով արդէն ձանձրացրել էին ալբանացուն:

Բոշաների ցեղը Աղրիանոսպոլսի մօտ բանակ դրեց և սկսեց ասպել «Կիպետարի» հաշւով: Բայց ալբանացին շուտ ձանձրացաւ այդ պարասի մարդկանց կերակրելուց և սկսեց պահանջել, որ Գինան յետ ուղարկի բոշաններին Սերբիա: Սիրեկանների յարաբերութիւնները վասացան և վերջապէս բոշաները ստիպւեցան հեռանալու: Բայց նոքա Գինային բամբասանկներով կռւեցնելով ալբանացու հետ, տարան իրանց հետ: Սակայն առաջուց նոքա այնքան փող և թանկագին ընծաներ կարողացան կորպել ալբանացուց, որ հայրենիք վերադառնալով 600 խող գնեցին: Գինային նոքա տարան այն հաշւով, թէ «Կիպետարը» կը կարօտի և կը գայ Սերբիա նորա հետ ասպելու, ուր ծնողները կրկին կ'օգտւեն նորա առատաձեռնութիւնից:

Բայց այդ ենթադրութիւնը սխալ դուրս եկաւ. «Կիպետարը» այլ եւս չը վերադարձաւ իւր սիրունու մօտ: Գինայի կեանքում մեծ փոփոխութիւն առաջացաւ: Նա կատարեալ գերի դարձաւ բոշաների մօտ, որոնք նորան ակներև ծախում էին և աչք չէին հեռացնում նորանից դեռ յուսալով, թէ ալբանացուն կը դրաւեն: Գինան խսկական գերի էր և վերջերը իւր կեանքի այդ շրջանի մասին խօսելիս նորան նկարագրում է ամենամուժ դոյներով:

Այդ ժամանակները նա մօտ քան և երեք տարեկան էր. և նորա գեղեցկութիւնը իւր կատարելութեանը հասաւ:

Նորա նախընթաց կեանքն էլ լի էր արկածներով, իսկ այժմ՝

սկսւեց անվերջ, ճոխութիւնից աղքատութիւնը, փալլից մթութիւնը տանող, փռփոխութիւնների շարքը, մինչև որ վերջապէս նա սաստիկ աղքատութեան մէջ ընկաւ:

Զարմանալին այն է, որ այդ ժամանակ նա ոչ մի բանսատեղծութիւն չի գրել: Երբ նորանից հարցրին դորա պատճառը, նա պատասխանեց. «Խոզերի մէջ ապրելով, ես բանսատեղծութիւն յօրինելու կարողութիւն չունեի. միւնոցն ժամանակ մոտածում էի միայն, թէ ինչպէս վերադառնամ Ալբանիա: Բաժանման ժամանակ նորա սէրը դէպի «Կիպետարը» բորբոքւեց նոր ուժով, և նա չարչարում ու նեղուում էր ազատութեան համար: Սոցա վերաց աւելցաւ նաև հիւանդութիւնը:

Փանի որ բոշաները փող ունեին, նորա հետ բաւականին լաւ էին վարուում. բայց երբ որ «Կիպետարի» փողերը հատան և Գիւնան չէր կարողանում նոցա համար եկամուտի աղբիւր դառնալ, նորա զրութիւնը անտանելի դարձաւ: Նոքա անամօթաբար իրանց պահանջներն էին անում: Եղբայրները կողովուեցին նորա թանկագին շորերն ու զարդերը և նա հիւանդացաւ ու բարոյապէս ձնշւած՝ իւր արիւանակիցների մօտ ապրում էր աղքատի պէս: Մինչև անգամ նորա մայրը կարծես իւր յոյսերը աղջկաց գեղեցկութեան վերաց էր դնում, որովհետև նա վերջապէս գանգատուեց իւր ցեղին, որ Գիւնան գիտէ «Կիպետարի» տեղը, բայց չի ուզում յայսնել, որ աղքականները նորանից ընծաներ չը կորզեն: Բանը հասաւ ցեղի արիւանյեղ երկպատակման. Գիւնայի կուսակցութիւնը յարձակւեց նորա աղքականների վերաց և խաղաղութիւն կայացաւ այն պայմանով, որ Գիւնայի հորեղբօր որդիներից մինը, Պետրոս Ռանիցիչը (որ սիրահարւած էր Գիւնայի վերաց) գնար «Կիպետարին» գտնելու և համոզելու, որ վերադառնաց Գիւնայի մօտ, կամ ստիպէ, որ փող ուղարկէ նորան: Բոշաները դորանով առժամանակ հանդարտւեցան և Պետրոս Ռանիցիչը գնաց Ալբանիա, որտեղից այլ ևս չը վերադարձաւ: Հաւանականօրէն ալբանացու սուրը վախճան դրեց նորա պահանջներին:

Գիւնան թէւ նախատեսնում էր այդ փորձի անլաջողութիւնը, բայց այնպէս էր ցոյց տալիս, որպէս թէ յոյս ունի իւր սիրեկանի դարձն և դորանով այնպէս վարպետութեամբ խարեց բոշաներին,

որ նոքա աւելի ազատ թողին նորան և թոյլ էին տալիս, որ առանց ուղեկիցների բանակից հեռանայ մօտակայ դիւղերը:

Դորա շնորհիւ և իւր միւս հորեղօր որդու օգնութեամբ նա վերջապէս կարողացու վախչել ազգականներից: Հանգամանքները օգնեցին նորա փախուստին և հետամուտ եղողները չը կարողացան հասնել նորան: Նա վերջապէս, կարծես ծանր երազից յետոյ մի քիչ թեթևացած, հնչեց և փախուստի ժամանակ գրած ոտանաւորներում յաւիտեանս հրաժարում է իւր հայրենիքից:

«Թող քեզ աստած պահպանէ, մերժւած, անապատ երկիր, ուր այդքան քիչ ուրախութիւն, իսկ վիշտ, աւաղ, այդքան շատ կաց: Երբէք, դմւ, բոշա ժողովուրդ, չես գայ իմ գերեզմանին այցելութեան, չես օրհնի ինձ այնոտեղ, ուր պիտի գտնեմ յաւերժ հանգիստ», ասում է նա ի միջի այլոց իւր բանաստեղծութիւնների մէջ: Այս ժամանակամիջոցում նա մօտ քսան ոտանաւոր է գրել, որոնց մէջ իւր ցեղն անւանում է տես ազռաւը և իւր սիրելու մօտալուս տեսութեան առթիւ, Ալբանիայի «սպիտակ լեռների» մէջ, բուռն ցանկութիւն է յայտնում:

Երկար ժամանակ դրկանք ու կարիք կրելով նա թափառում էր Ալբանիայում «Կիպետարին» որոնելով, բաց ոչ մի տեղ նորա հետքն անգամ չը փուտ: Այս ժամանակում գրած նորա բոլոր բանաստեղծութիւններից բղխում է ատելութիւն դէպի մարդիկ և զանգաս բազզի վերաց: Նորանից մի երկար ոտանաւորի մէջ, որ ուղղւած է ալբանացիներին, յուսահատութիւնը նորան թելադրում է այս ազգի, մանաւանդ նորա կանանց վերաց, ամենաղատն զրպարտութիւն, որոնք հաւանականօրէն գեղեցիկ ալբանացու նախկին սիրուհուն հանդիպում էին ոչ այնքան բարեկամաբար: Վերջապէս Գինան մի տեղեկութիւն ստացաւ, որ նորա «Կիպետարը», անտարակոյս աւազակութեան համար հալածւելով թուրքաց զինուրներից, փախել է Խոտլիս մի նորատի ալբանուհու հետ: Այս լուրը այնպէս ազգեց Գինայի վերաց, որ նա խելագարւած վազում էր փողոցներով և յարձակում ալբանների վերաց: Նորան ծեծում էին, և մի կուտում, որ ծագել էր նորա խելառութիւններից, կտրեցին նորա ձախ ձեռքի մեծ մատը: Նա խոստովանում էր իւր վերջին պատմութիւններում, որ այն ժամանակ ինքը բոլորովին խելագար էր:

Վերջապէս յոդնատանջ, վիրաւոր և հիւմնդ նա մի կերպ հասաւ ծովափի, նտալիա ընկնելու յուսովի նորա անհաստատակամ, անհանգիստ բնաւորութիւնը, անբաւական ձգոռումը մի անհասանելի բանի, արտայացուում է հետեւալ բանաստեղծութեան մէջ, որ գրել է նտալիա գնալուց յետոց:

«Զարագուշակ վիշտը ամբողջ կեանքումն հետևում է ինձ քայլ առ քայլ. և Աստւած ոչ մի տեղ չը տւեց ինձ ուրախութիւն ու հանգիստ Ամեն բան ինձ գրաւում է դէպի հեռուն... դէպի անծայր հեռաւորութիւնը բայց այն, ինչ որ որոնում եմ, չեմ գտնում ոչ մի տեղ»:

«Թէ սարի վերայ եմ, — ինձ գրաւում է ձորը, թէ մարգերի վերայ եմ, — քարշում է պայծառ աղբիւրի խորքը: Եթէ ես աստղ լինէի, որ փայլում է գիշերային կամարում, անյադ ցանկութիւնս պիտի լինէր պայծառ լուսին դառնալ»:

«Եթէ ես Բալկանեան շլթայի վերայ բուսած փարթամ՝ վարդ լինէի, պիտի նախանձէի այն ոսկուն, որ գոտանւում է նորա սրտում Նրկարանում են ձանձրալի բոպէները, մինչեւ քեզ հետ տեսնելու բայց նորա մասին մոտածելիս ես ալեկոծւում եմ ուրախութիւնով և երկիւզով:

«Կը գնա դու արդեօք, չեմ գալ արդեօք, չը գիտեմ ի՞նչ պիտի սպատահի ինձ: Ես էլ չեմ կարողանում հասկանալ ինձ, ուրիշն էլ չի կարող հասկանալ ինձ երբէք: Քեզանից հեռու, — սիրոս պատառում է քեզ համար. նստած ես դու մօտ, — ես պատրաստ եմ քեզ արհամարհնելու»:

«Կիսկետարին» որոնելիս՝ հարաւային նտալիայում շրջելու ժամանակ՝ նա ծանօթացաւ մի հարուստ ուսմինստի հրէայի հետ, որի անունն էր Եսակօֆ Դորշտէյն. այնուհետև ալբանացու. հետ ունեցած կապերը կտրւեցան առ միշտ Գորշտէյնը սաստիկ սիրեց գեղեցիկ և կրթւած բոշային և մինչեւ մահ նորան հաւատարիմ մնաց: Դա, Գինայի նկարագրութեամբ, ոչ միայն հարուստ վաճառական էր, այլ և կատարեալ կրթութիւն ստացած մի մարդ: Ունենալով հարուստ մատենադարան, նա իւր բոլոր ազատ ժամանակը անցնում էր կարդալով: Նա մասնաւորապէս սիրում էր գերմանացոց նորագոյն գրողներին, որից այդ ճաշակը անցաւ Գինային: Այդ

մարդու ազգեցութեան տակ Գինան մի քանի բոշայերէն նկարագրութիւններ և պատկերներ գրեց, որոնցից երեքը նորան մեծ հուշակ կարող են լինել:

Յւրաքանչեալ գործերի պատճառով Գորշտէջնը գնում էր հիւսիսային Աֆրիկա և երբեմն իւր հետ վերցնում էր Գինային: Այնուեւ Գինան հանդիպեց Աֆրիկայի բոշաներին, որոնց նա առատ պարզեատրում էր. բոշայի արիւնը խսկոյն երեւում էր, չը նայելով այն նեղութիւններին, որ նա քաշել էր իւրայիններից:

Գորշտէջնի հետ անցկացրած հինգ տարին նորա փոթորկալի կեանքի միակ բազգաւոր ժամանակն էր: Բայց բանաստեղծուհու բոշայական բնաւորութեան շնորհիւ այդ պայծառ ժամանակի վերայով էլ մի սկ ամս ասհեց: Գորշտէջնը աֆրիկացի բոշաներից գեղեցիկ պատահնի Պետրոս Կանդալատարին ծառայ վարձեց, որը խոր տիրու բացակայութեան ժամանակ վայելում էր իւր տիրուհու յատուկ ողորմածութիւնը: Բոշաների բարոյականութեամբ¹⁾ այստեղ ոչ մի զատապարտելի բան չը կար, բայց Գորշտէջնը այս բանին ուղիւ կերպ նայեց: Մի օր, Աֆրիկայից վերադառնալուց յետոյ, արձակեց ծառային լաւ վարձառելով և առանց որ և է նկատողութեան: Գինան այդ իմանալով, սաստկապէս պահանջեց, որ բոշա ծառային վերադարձնեն: Դա աւելի ևս արմատացրեց Գորշտէջնի կասկածը, որ առիթ տւեց բանաստեղծուհուն անբարոյականութեան համար անարատւելու:

Նոյն գիշերը Գինան անցայտացաւ, իսկ երրորդ օրը նաւաստիները նորան հանեցին ծովից անշնչացած և բերին Գորշտէջնի մօտ: Այդ գեղգից յետոյ Գինան ջերմեց և երբ մի քանի շաբաթից յետոյ նա վերկացաւ հիւսնդութիւնից, «իւր ճակատագրական գեղեցկութեան, — ինչպէս ինքն էր պատմում, — հետքն էլ չը մնաց: Նա անցայտացաւ ինչպէս մի ծանր երազ և հայելու մէջ նա տեսնում էր մի բոլորավին սովորական կնոջ»:

Նորա առաջին զգացմունքը այն վախն էր, թէ Գորշտէջնը այժմ չի սիրի իրան, և այդ զգացմունքը գեղւեցաւ այն բանա-

¹⁾ Տես մեր լոդւածը «Հակ-բոշաներ»ի բարոյականութեան մասին. «Մուրճ» № 7, 8, 9. 1892թ.

ստեղծութիւնների մէջ, որոնց տակը նա ստորագրում էր. «Ճգեղ
Գինա»:

Այդ երկիւղը ըստ երևոյթին զուր էր: Բայց բազդը նորան
ուրիշ աւելի ծանր հարւած էր վիճակել: Մի անգամ Աֆրիկա ձա-
նագարհորդելիս Գորշտէնը հիւանդացաւ և բժիշկների խորհրդով
պիտի բնակւէր կ. Պոլսում: Այնուեղ ազգականները համոզում էին
Գորշտէնին, որ նա հեռացնէ գնչուհուն, բայց նա լսել անգամ
չէր ուզում այդ բանը:

Այնուամենայնիւ Գինային հեռացրին և միայն հիւանդի խիստ
խնդիրքի շնորհիւ ամեն օր թող էին տալիս Գինային մտնելու
նորա մօտ մի քանի րոպէով:

Գինան զգում էր, որ իւր դրութիւնը անտանելի է այդ
տանը: Այդ բաւական չէր. Գորշտէնի մահից յետոյ նորա ազգա-
կանները բացարձակ յայտնում էին իրանց կասկածը, որ Գինան
թունաւորել է նորան, որ շուտով օգտուի այն ժառանգութիւնից,
որ կտակել էր նորան հանգուցեալլ: Կարելի է երևակայել թէ այս
անսարդար մեղադրանքը ինչպէս ոլէտք է ներգործէր գնչուհու
կրակու հոգու վրայ:

Նա իւր վիշտն ու բարկութիւնը թափեց մի երկար ոտանա-
ւորի մէջ, որտեղ ասում է թէ, նորան ցեխը կոխեցին, բայց նա
ցեխի մէջ էլ չի դադարում մարդկանց արհայարհել և նոցա.
վերայ ծիծաղել:

Այսպէս թէ այնպէս Գորշտէնի մահից յետոյ Գինան մեղա-
դրւելով թունաւորելում՝ բանդարկւեց: Թէև հանգուցեալլի մար-
մնի դատաստանական քննութիւնը ապացուցեց նորա անմերդու-
թիւնը, բայց նա այնուամենայնիւ չազատեց բանդից, որովհետև
Գորշտէնի ազգականները մեղադրում էին, թէ նա գողացել և պա-
հել է ժառանգութիւնը: Երեք ամիս շարունակ բանաստեղծուհին
տանջում էր բանդում, մինչև որ իւր վերայ բարդած բոլոր ամ-
բաստանութիւններից բոլորովին արդարացաւ:

Այնուհետև նորան պաշտօնապէս յանձնեցին Գորշտէնի կտա-
կած տասը հազար դուկատը և նա այդ փողերը տեղաւորեց մի հայ
բանկիրի մօտ:

«Իարձեալ Գինան, թէև հարուստ, մենակ մնաց աշխարհում:

Նատ անգամ նա պատրաստում էր հեռանալ կ. Պոլսից, բայց չէր կարողանում բաժանել իւր սիրեկանի շիրիմից: Այդ ժամանակւայ նորա ոտանաւորները բուրում են մենակութեան կարօտալի զգացմունք և տիրալի հայեացք իւր անցեալի վերաց: Իւր անբաղդութեան համար նա ինքը մեղադրում է իւր «անհանգիստ բոշացական արիւնը, իւր թառաշըջիկ կեանքի սիրահար լինելը, իւր մշտական ձգտումը դէպի անորոշ հեռուն, և իրան նմանեցնում է թռչնակին, որ չը գիտէ ոչ սահման և ոչ վերջ»:

Սակայն Գինան դարձաւ իւր հարստութեամբ կ. Պոլսի «հետաքրքրաշարժ» կանանցից մինը. զանազան արկածախնդիր մարդիկ սկսեցին քաշ գալով նորա ողորմածութիւնը հայցել: Մկղբում Գինան փակ կեանք էր վարում և օրերը անցէր կացնում լացով կամ քնած: Սակայն դա երկար չը տեեց. մէկ ու կէս տալուց յետոյ նա իւր փողերը հանեց հայի բանկից և գնաց Սերբիա ազգակոն բոշաների մօտ:

Բայց «թաւիշ և մետաքս հագած կինը» նոցա մօտ երկու օր միայն հիւր մնաց և ազգականներին հազար դուկատ բաժանելով, գնաց Պարիզ: Գորշտէնը նորան շատ էր սպատմել Պարիզի կեանքից և նա ցանկանում էր ճաշակել այդ նոր տպաւորութիւնները:

Պարիզի ազմկալի և բազմատարազ կեանքը օտարուտի բանաստեղծուհու թսկ ճաշակովն էր և նա շուտով մի խումբ կասկածելի անցեալով երկրպագուներ գտաւ: Գինան դոցանից ոչ մինի հետ սերտ յարաբերութիւն չունէր և բաւականանում էր նորանով, որ նոցանից սովորում էր, թէ ինչպէս պէտք է կեանքը վայելել: Մէկը միայն, մի տրանսիլւանացի, գտաւ նորա սրտի բանալին վերջ իվերջոյ և հեշտացրեց Գինայի Պարիզ բերած ութ հազար դուկատից վերջինը շռայլելը: Թէ դորա հետևանքն ինչ եղաւ, դիւրին է երեակայել: Գինան մի քանի ժամանակ պարտքով էր ասլրում Պարիզում: Բայց այնքան պարտք արաւ, որ պարտատէրերը սկսեցին նորան հալածել և բոշաների առաջին բանաստեղծուհին, հոչակւած գեղեցկուհին, դատաստանական կարգով ուղարկեց իւր հայրենիքը—Սերբիա:

Այդպէս էր ահա Գինա Ռանիցիշի փայլուն և մրրկալի կեանքը: ևս խաղացի իմ դերս և իջայ բեմից, իբրև իւր կենսագրութեան

վերջաբան ասաց նա Վլիսլոցկուն և արտասուքի երկու խոշոր կաթիլներ ցած գլորւեցան նորա այտերից:

Դինայի բանաստեղծութիւնների մէջ չի լսւում ուրախ ներդաշնակութիւն, նոցա մէջ երգւում է աշխարհային աղէտը, անհամաձայնութիւն ինքն իրա և աշխարհի հետ, յաւիտենական յոյսեր և մշտական հիասթափումն, կրքերի անզուսպ կրակ և խիստ իրականութեան դառն զիտակցութիւն...

Իւր աղքատ մայրենի լեզւին շատ բանաստեղծութիւնների մէջ նա կարողացել է չը տեսնած ոյժ և նրբութիւն տալ, թէև նա գրում էր խառն բարբառներով, վերցնելով բառերը մասսմբ թուրքաց, մասսմբ Սերբիացոց բոշաներից:

Նորա ոտանաւորները ախորժալուր և ներդաշնակ են: Արտայացութիւնները, պատկերները, խօսքի դարձւածները ոչ մի ձևական արհեստական բան չունին: Նորա բոլոր բանաստեղծութիւնների մէջ նկատելի է գերմանականի ազդեցութիւնը, որի հետ նա շատ լաւ ծանօթ էր:

Թէ Փիզիկապէս և թէ բարոյապէս խորտակւած, Դինա Ռանիչէլ իւր կեանքի վերջին քսան տարիները անցկացրեց իւր ցեղի մէջ ծայրայեղ չքաւորութեան մէջ: Խսկ այժմ առաջին բոշա բանաստեղծուհին իւր հանգիստը մի անցայտ շիրմի գրկում գտաւ, որին ճանաշում է միայն նորա վերայ սաւառնող քամին... Նա մեռաւ 1891 թւին:

Թարգմանելով այս յօդածը ոռուսերէնից, մեր նպատակն էր պոլսեցի հայ գրադէտների ուշադրութիւնը գրաւել այս հետաքըլքքրաշարժ անձնաւորութեան վերայ, որպէս զի օր առաջ հաւաքւէին և լոյս ընծայւէին նորա հայերէն ստեղծագործութիւնները, եթէ մինչև օրս կորատի չեն մատնած նոքա, որոնց մասին յիշատակում է գիտնական Վլիսլոցկին:

Հայերս անտարակոյս իրաւունք ունինք այդ Լուրուպական հոչակ վայերող գնչուհու տաղանդով պարծենալու, քանի որ նորան կորուստից ազատողը և հիմնաւոր կրթութիւն տւողը մի պոլսեցի հայ է եղել: